

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Մերիա	[3] Համար
19	Օգոստոս	2019 թ.		Բ	7196199089
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
19	Օգոստոս	2019 թ.		Մերիա	Համար
			Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ		
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					
[7.1] ՀՆՄ կտրոնի համար					

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	3	5	3	8	1	1	2
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[10] Անվանումը	«ՎԻ ԳՐՈՒՊ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)							
[11] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ		N 1570015111280200					
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	Յոդ միկ.շրջ. 23 18							
[13] Լրացուցիչ տվյալներ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								
[16] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ							
[17] Բանկային տվյալները	ՀՀ Ֆին. և ախ. աշխ. գործառն. վարչ.		N 900011000834					
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՍԱՍ ՄԱՍԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5							
[19] Լրացուցիչ տվյալներ								
[20] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր	Համար						
		Ամսաթիվ						

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№/Ը/Կ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր ծավալը կամ ժամանակահատվածը	Միավորի գինը	Զեղչ (%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	18.67	5000		93350
2	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	16	5000		80000
3	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	12.08	5000		60400
4	Հայերեն-հնդկերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	12.5	8800		110000
5	Հայերեն-հնդկերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	14	8800		123200
6	Հայերեն-հնդկերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	5	8800		44000
7	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	38.83	5000		194150
8	Հայերեն-ռուսերեն լեզվի գրավոր թարգմանություն և հակառակը	Էջ	118.33	2500		295825
9	Հայերեն-արաբերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	ժամ	19	7450		141550

10	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	Ժամ	3.75	5000	18750
11	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	Ժամ	4	5000	20000
12	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	Ժամ	5	5000	25000
13	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	Ժամ	6.08	5000	30400
14	Հայերեն-պարսկերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	Ժամ	4.67	6950	32456.5
15	Թարգմանություն ժեստերի լեզվով	Ժամ	2.5	8000	20000
16	Հայերեն-հնդկերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	Ժամ	4.167	8800	36669.6
17	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	Ժամ	4	5000	20000
18	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	Ժամ	5	5000	25000
19	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	Ժամ	4.5	5000	22500
20	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	Ժամ	1.75	5000	8750
21	Հայերեն-վրացերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	Ժամ	1.7	6975	11857.5
22	Հայերեն-ռուսերեն լեզվի բանավոր թարգմանություն և հակառակը	Ժամ	2	5000	10000
23	Հայերեն-վրացերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	2.1	2975	6247.5
24	Մոլդովերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	0.52	13550	7046
25	Ֆրանսերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	22.23	4475	99479.25
26	Հայերեն-ֆրանսերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	22.27	4475	99658.25
27	Վրացերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	2.53	2975	7526.75
28	Պարսկերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	0.45	3475	1563.75
29	Հայերեն-վրացերեն լեզվի գրավոր թարգմանություն և հակառակը	Էջ	8.47	2975	25198.25
30	Վրացերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	7.29	2975	21687.75
31	Ուկրաիներեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	0.75	4550	3412.5
32	Հայերեն-վրացերեն լեզվի գրավոր թարգմանություն և հակառակը	Էջ	22.08	2975	65688
33	Հայերեն-պարսկերեն լեզվի գրավոր թարգմանություն և հակառակը	Էջ	15.88	3475	55183
34	Հայերեն-վրացերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	36.43	2975	108379.25
35	Հայերեն-պարսկերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	18.78	3475	65260.5
36	Հայերեն-վրացերեն լեզվի գրավոր թարգմանություն	Էջ	2.45	2975	7288.75
Ընդամենը					1997478.1

Մասնաձեռնության
 մատուցող
 (աշխատանք
 կատարող)

STEPANYAN HMA YAK 2301850293

(ստորագրությունը, անունը, ազգանունը)

19/08/2019 12:27:03

Մասնաձեռնության
 (աշխատանք)
 ստացող՝

(ստորագրությունը, անունը, ազգանունը)



ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

«23» հուլիսի 2018թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կոոուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիրեռհանցագործությունների քննության վարչության ՀԿԳ քննիչ՝ Ն.Գ.Համբարձումյանս, վերանայելով վարույթիս թիվ 58158717 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում 2017 թվականի հուլիսի 25-ին ՀՀ քրեական օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 58158717 քրեական գործը հետևյալ դեպքի առթիվ.

Գրիգելդա Արզարի Միսնայանը, 2017թ. հուլիսի 25-ին, ՀՀ ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչությունում հաղորդում է ավել այն մասին, որ անհայտ անձը, 2017 հունիսի 22-ին, իրեն անհայտ եղանակով փոփոխելով մուտքանունը և գաղտնաբառը, ապօրինի հասանելիություն է ստացել «facebook.com» սոցիալական կայքի «Eliza Simonyan» և «Instagram.com» սոցիալական կայքի «veliz_sing» անվանումներով իր անհատական էջերին, ինչպես նաև «gmail.com» էլեկտրոնային փոստային համակարգի elizasimonyan@gmail.com էլեկտրոնային փոստին՝ իրեն գրկելով դրանց օգտագործման հնարավորությունից:

2017 թվականի հուլիսի 27-ին թիվ 58158717 քրեական գործը ստացվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչություն և դրա հետագա նախաքննությունը հանձնարարվել է ինձ:

Նախաքննության ընթացքում իրավական օգնություն ցուցաբերելու մասին հարցում է ուղարկվել Վրաստանի իրավասու մարմիններին, որի կատարմամբ ստացված նյութերը վրացերեն լեզվով են:

Նկատի ունենալով, որ նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել ստացված վրացերեն լեզվով նյութերը թարգմանել հայերեն լեզվով, իսկ Ելենա Տուրուշին ազատ տիրապետում է հայերեն և վրացերեն լեզուներին, շահագրգռված չէ գործի ելքով, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

Սույն քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Ելենա Տուրուշին /անձնագիր 0521229, թարգմանություն կատարելու թույլտվություն համար 29/, որին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածը և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ՝

Ն.Գ.Համբարձումյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
/ Թարգմանիչ ներգրավելու մասին/

02 հունիսի 2017թ.

ք.Երևան

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության քննիչ՝ Ա.Համգոյանս, վերանայելով վարույթիս թիվ 12200417 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

2017 թվականի հունվարի 15-ին՝ ժամը 23:15-ին «Էրեբունի» ք/կ-ից, «Ոստիկանության Էրեբունի բաժին ահազանգ է ստացվել այն մասին, որ Նոյեմբերյանի շտապօգնության խումբը ք/կ է տեղափոխել 1984 թվականին ծնված՝ Արսեն Սերժիկի Խաչիկյանին՝ «Պոլիտրավմա» ախտորոշմամբ:

Պարզվել է, որ 2017 թվականի հունվարի 15-ին՝ ժամը 06:30-ի սահմաններում Վրաստանի Հանրապետությունում, Թբիլիսի քաղաքից Մառնեուլի քաղաքի տանող ուղեմասում, ավտոճանապարհի 19-րդ կ/մ-ի վրա, Թեթրիժարոյի շրջանի Կողայի գյուղի մոտակայքում միմյանց են ընդհարվել Կարեն Արտավազդի Ամիրխանյանի «ԲՄՎ», մակնիշի և Բաղրի Գուրչիանի կողմից վարած «Մերսեդես», մակնիշի ավտոմեքենաները, որի հետևանքով «ԲՄՎ», ավտոմեքենայի ուղևոր Արսեն Սերժիկի Խաչիկյանը և վարորդ Կարեն Արտավազդի Ամիրխանյանը ստացել են մարմնական վնասվածքներ և տեղափոխվել Մառնեուլի քաղաքի հիվանդանոց, որտեղից Ա.Խաչիկյանը տեխափոխվել է Երևան քաղաքի «Էրեբունի» ԲԿ, իսկ Կ.Ամիրխանյանը ամբուլատոր կարգով բուժօգնություն ստանալուց հետո դուրս է գրվել:

Ահազանգի վերաբերյալ նախապատրաստված նյութերով 09.02.2017թ-ին էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազությունում հարուցվել է թիվ 12200417 քրեական գործը և կատարվում է նախաքննություն:

Կ.Ա.Ամիրխանյանը «Հ-ում գործող որևէ բուժօգնությունում բուժօգնության չի դիմել: Ըստ Կ.Ամիրխանյանի՝ վթարի հետևանքով մարմնական վնասվածքներ ստացել է ձախ ձեռքի շրջանում կոտրվածքի ձևով, ձախ կողի շրջանում և աջ ոտքի ծնկան շրջանում սալջարդների ձևով:

Կ.Ամիրխանյանը ներկայացրել է ԿՀ-ի Մառնեուլի շրջանի քաղաքային հիվանդանոցից իր ամբուլատոր կարգով բուժօգնության վերաբերյալ ստացված բժշկական փաստաթղթերի պատճենները, որոնք գրառված են վրացերեն լեզվով:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել նշված բժշկական փաստաթղթերը թարգմանել հայերեն լեզվով, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Թիվ 12200417 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «ՎԻԳՐՈՒՊ», ՍՊԸ-ի թարգմանիչ՝ Նելլի Թոռչյանին և վերջինիս բացատրել «Քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքները և պարտականությունները:

2. Նելլի Թոռչյանին նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար «Քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՔՆՆԻՉ՝

Ա.ՀԱՄԳՈՅԱՆ

Ծանոթացա որոշմանը՝
02.06.2017թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

թարգման ճանաչելու մասին

<<11>> 06 2018թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչ, առաջին դասի խորհրդական՝ Յու.Կ.Սարգսյանս, վերանայելով վարույթումս գտնվող թիվ 15161692 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

1992թ.-ի հոկտեմբերի 31-ին, ժամը 12:00-ի սահմաններում Երևանի մետրոյի <<Երիտասարդական>> մետրոյի մոտից քաղ. Հ.Սարգսյանը, առանց հափշտակելու նպատակի, փախցրել է ԳԱՁ-2410 մակնիշի Ձ 19-55 ԱԴ պիի-ի ավտոմեքենան քաղ. Բ.Ցինցինաձեի և <<Միշա>> անունով անձնավորության հետ միասին և Սամորեդիա քաղաքում բռնվել է ՆԳ բաժնի աշխատակիցների կողմից, իսկ Բ.Ցինցինաձեն և <<Միշա>> անունով անձնավորությունը Սամորեդիա քաղաքից դիմել են փախուստի:

Փաստի առթիվ ՀՀ քր. օր.-ի 180 հոդվածի 2-րդ մասով հարուցվել է քր.գործ և կատարվել է նախաքննություն: Նախաքննության ընթացքում հիմնավորվել է Հ.Սարգսյանի մեղավորությունը և նրա մասով քր. գործը ուղարկվել է ժող. դատարան:

1992 թ.-ի դեկտեմբերի 28-ին որոշում է կայացվել Բ.Ցինցինաձեի և <<Միշա>> անունով անձնավորության կողմից առանց հափշտակելու նպատակի ԳԱՁ-2410 մակնիշի Ձ 19-55 ԱԴ պիի-ի ավտոմեքենան փախցնելու մասը թիվ 15161692 քրեական գործից անջատելու մասին:

2007թ.-ի ապրիլի 11-ին որոշում է կայացվել թիվ 15161692 քրեական գործի անջատված մասը համապատասխանեցնել ՀՀ քր. օր.-ի 177 հոդվածի 1-ին և 183 հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետին:

1993թ.-ի հունվարի 04-ին քրեական գործի անջատված մասով վարույթը կասեցվել է ՀՀ քր. դատ. օր.-ի 31 հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:

28.08.2017թ. քրեական գործով նախաքննությունը շարունակելը հանձնարարվել է ինձ:

28.08.2017 թվկանաին թիվ 15161692 քրեական գործն ընդունվել է իմ վարույթ և կատարվել է նախաքննություն:

Նույն օրը որոշում է կայացվել թիվ 15161692 քրեական գործի վարույթը վերսկսելու մասին:

Վրաստանի Հանրապետության իրավասու մարմնից իրավական օգնության միջնորդությանն ի պատասխան ստացվել են նյութեր վրացերեն լեզվով:

ուստի անհրաժեշտ է ներգրավել թարգմանիչ և որպես թարգմանիչ ճանաչել <<Վի Գրուպ>> ՍՊ ընկերության վրացերեն լեզվի թարգմանիչ՝ Նելլի Թոռչյանին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15 և 83 հոդվածներով:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթումս գտնվող թիվ 15161692 քրեական գործով թարգմանիչ ճանաչել <<Վի Գրուպ>> ՍՊ ընկերության վրացերեն լեզվի թարգմանիչ՝ Նելլի Թոռչյանին:

2. Նելլի Թոռչյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված թարգմանի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝



Յու. Սարգսյան

Որոշմանը ծանոթացա, պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ակնհայտ սուտ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Ն. Թոռչյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

04 օգոստոսի 2018թ.

ք.Երևան

«ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության ՃՏՀ քննության բաժնի ՀԿԳ քննիչ» Գոռ Թադևոսյան, վերանայելով ճանապարհատրանսպորտային պատահարի վերաբերյալ նախապատրաստվող թիվ 92 նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

2018թ. մարտի 31-ին, ժամը 03:30-ին Սվետլանա Մամիկոնի Օսիպյանը բուժօգնության է դիմել «Սլավմեդ» Բ/Կ և հայտնել, որ մարմնական վնասվածքները ստացել է 30.03.2018թ., ժամը 11:00-ին Վրաստանում տեղի ունեցած ավտովթարի հետևանքով, որի ժամանակ եղել է ուղևոր:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության ՃՈ ՃՊԾ 1-ին սպայական գումարտակի ՃՏՊ գործերով հետաքննության և վարչական վարույթի իրականացման բաժանմունքում նախապատրաստված նյութերը Երևան քաղաքի դատախազության միջոցով ուղարկվել են ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչություն, որտեղ էլ նախապատրաստվել են թիվ 92 նյութերը:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ Սվետլանա Մամիկոնի Օսիպյանը մարմնական վնասվածքները ստացել է Վրաստանում տեղի ունեցած ավտովթարի հետևանքով, որից հետո, վերադառնալով ՀՀ՝ 31.03.2018թ.-ին բուժօգնության է դիմել «Սլավմեդ» բժշկական կենտրոն:

Նկատի ունենալով, որ Սվետլանա Մամիկոնի Օսիպյանը մարմնական վնասվածքներն ստացել է Վրաստանում տեղի ունեցած ավտովթարի հետևանքով և հանցագործության մասին հաղորդումն առանց քրեական գործ հարուցելու անհրաժեշտ է հանձնել ըստ ենթակայության, ոստի անհրաժեշտ է մինչ այդ վրացերեն լեզվով թարգմանել նախապատրաստված նյութերն ամողջությամբ և որպես թարգման ներգրավել «ՎԻ-Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Ելենա Տուդուշին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Թիվ 92 նյութերով որպես թարգմանիչ ներգրավել «ՎԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության թարգմանչուհի՝ Ելենա Տուդուշին և վերջինիս բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքները և պարտականությունները:

2. Ելենա Տուդուշին նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀԿԳ ԲՆՆԻՉ՝

Գ. Թադևոսյան

Ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքները և պարտականությունները, որոնք ինձ պարզ են և հասկանալի, ինչպես նաև նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝

Ելենա Տուդուշ

04.09.2018թ.

ՈՐՈՇՈՒՄ
ԹԱՐԳՄԱՆԻՉ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

« 07 » հունիսի 2018թ.

ք.Երևան

« քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդու թրաֆիքինգի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչության ՀԿԳ քննիչ Լ.Գ.Հարությունյան, վերանայելով վարույթիս թիվ 69103418 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲ ընկերությունը 2018թ. մայիսի 29-ին հաղորդում է ներկայացրել ՀՀ քննչական կոմիտե այն մասին, որ 2018թ. ապրիլի 9-ին Քուշա Ալդիվանդին «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին ներկայացրել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԻ Էլ Սի ընկերության կողմից 06.10.2017թ. ստորագրված N 8931488 բանկային մուրհակը, որը հաստատում է ընկերության անվերապահ պարտավորությունը՝ մուրհակի շահառու «IBX HK Company Limited» ընկերությանը կամ մուրհակը ներկայացնողին վճարել 1.000.000 եվրոյի չափով գումար: Մուրհակի վրա առկա են Ընկերության ղեկավար Դուգլաս Ֆլինտի և ակտիվների կառավարիչ Էնդրյու Բառնսի ստորագրությունները:

Մուրհակի իսկությունը պարզելու նպատակով Բանկը համապատասխան հարցումներ է ուղարկել նշված ընկերությանը, որոնց արդյունքում պարզվել է, որ մուրհակը կեղծ է, մասնավորապես՝ մուրհակում որպես ստորագրող մատնանշված անձանցից մեկը՝ Էնդրյու Բառնսը բանկին ուղարկված էլեկտրոնային գրությամբ հաստատել է, որ մուրհակը չի ստորագրվել իր կողմից:


Դեպքի առթիվ 01.06.2018թ. ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 34-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 203-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 69103418 քրեական գործը:

Նկատի ունենալով, որ սույն քրեական գործով անհրաժեշտ է կատարել պարսկերենից հայերեն գրավոր թարգմանություն, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Հրանուշ Թախմասյանին, ով ազատորեն տիրապետում է հայերեն և պարսկերեն լեզուներին, գործով չձախազրգոված անձ է:
2. Թարգմանիչ Հ.Թախմասյանին պարզաբանել նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ  Լ.Հարությունյան





« 06 » հունիսի 2018թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Գ. Ս. Աղաբաբյանս, վերանայելով վարույթիս թիվ 69111716 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում քննվող թիվ 69104216 քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ 2016 թվականի ապրիլի 25-ին՝ ժամը 22-ի սահմաններում, Ռուբեն Բալյանի մոտ առկա տրոսիլ նյութից պատրաստված ինքնաշեն սարքավորումը պայթել է թիվ 63-րդ ուղևորատար երթուղին իրականացնող «Բոգդան» մակնիշի, 48-29S հաշվառման համարանիշի ավտոբուսում, որի հետևանքով ավտոբուսում գտնվող 8 անձինք ստացել են տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ, իսկ Ռուբեն Բալյանը և Արմեն Հովհաննիսյանը մահացել են:

Քննության ընթացքում նշանակվել են դիակի դատաբժշկական, դատաբժշկական, դատագենետիկական փորձաքննություններ:

Համաձայն նշանակված դատաբժշկական փորձաքննությունների եզրակացությունների՝ տուժողներ Սուրեն Ստեփանյանի, Հարություն Թերզյանի, Անահիտ Միքայելյանի, Անուշ Եղիկյանի, Հասմիկ Մելքոնյանի, Արթուր Մարգարյանի, Էդգար Գասպարյանի, Ռուլանդ Խոջոյանի առողջությանը պատճառվել են միջին ծանրության վնաս՝ առողջության տևական քայքայումով:

Արմեն Հովհաննիսյանի դիակի դատաբժշկական եզրակացության համաձայն՝ վերջինիս մահը վրա է հասել կյանքի հետ անհամատեղելի կոպիտ մարմնական վնասվածքներից, որն էլ պայմանավորված է եղել՝ գլխի, կրծքավանդակի, որովայնի, կոնքի համակցված պայթույնային վիրավորումներով:

Ռուբեն Բալյանի դիակի դատաբժշկական եզրակացության համաձայն՝ վերջինիս մահը հետևանք է ստացած կոպիտ մարմնական վնասվածքների, որոնք էլ պայմանավորված են եղել պայթույնի և դրա հետևանքով առաջացած արգասիքի՝ հարվածային ալիքի ազդեցությամբ:

Նախաքննության ընթացքում "Սուրբ Աստվածամայր" բժշկական կենտրոնից ստացվել է գրություն այն մասին, որ բաց բեկորային վնասվածքներ ստացած տուժողներ Էդգար Գասպարյանի և Ռուլանդ Խոջոյանի մոտ հայտնաբերվել է Հեպատիտ Յ հիվանդություն:

Քննության ընթացքում թիվ 69104216 քրեական գործի նյութերով բացահայտվել է այլ հանցագործության դեպք, ուստի քրեական գործի նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 277-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է նոր քրեական գործ՝ անհայտ անձի կողմից սանիտարահամաճարակային կանոնները խախտելու դեպքի առթիվ:

2017թ. հունիսի 30-ին որոշում է կայացվել թիվ 69111716 քրեական գործով վարույթը կասեցնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով:

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել վրացերենից հայերեն թարգմանել որոշ փաստաթղթեր, ուստի ելնելով վերոգրյալից և

ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 69111716 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Նելլի Թոռյանին:

2. Նելլի Թոռյանին բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացնել ակնհայտ կեղծ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ՝



Գ. Ս. Աղաբաբյան

Ծանոթացա որոշմանը՝



«06» հունիսի 2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգման ճանաչելու մասին

30 հունսի 2018 թ.

ք.Երևան

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, երրորդ դասի խորհրդական՝ Գ.Զ. Հովհաննիսյանս, վերանայելով վարույթում քննվող թիվ 13161618 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2018 թվականի հունվարի 12-ին՝ ժամը 22:05-ին ոստիկանության Երևան քաղաքի վարչության ՕԿԿ-ից հաղորդում է ստացվել, որ իրենց է զանգահարել անհայտ քաղաքացի և հայտնել, որ «Ոսկու շուկայի» մոտ մի քանի հոգի մի գրոսաշրջիկի գցել են գետնին խփում են, ոնց որ ուզում են թալանել:

Նշված վայրից ոստիկանության ՊՊԾ գնդի 3-րդ հատուկ գումարտակի 1-ին վաշտի ծառայողները ոստիկանության Կենտրոնական բաժին են հրավիրել ահազանգող քաղաքացուն՝ Էդգար Էդիկի Բալանյանին և ներկայացրել վերջինիս կողմից որպես վիճաբանության մասնակից մատնացույց արված Արմեն Գրիգորի Ներսիսյանին:

Ժամը 22:45-ին «Թիվ 1-ին համալսարանական» հիվանդանոցից ահազանգ է ստացվել, որ Շտապօգնության թիվ 06 բրիգադը «Ոսկու շուկայի» մոտից «Պոլիտրավմա» ախտորոշմամբ բուժօգնության է տեղափոխել Էսան Ալիոեզայի Զահեդին, ով հիվանդանոցում հայտնել է, որ նշված վայրում ծեծի է ենթարկվել:

Նյութերի նախապատրաստման ընթացքում Է.Զահեդին հրաժարվել է հանցագործության մասին հաղորդում տալուց և բացատրությամբ նշել է, որ իրեն ոչ ոք չի հարվածել, վնասվածքները ստացել է վայր ընկնելու հետևանքով:

Համաձայն դատաբժշկական փորձաքննության թիվ 0172/հ եզրակացության՝ Է.Զահեդիի ստացած մարմնական վնասվածքները՝ ձեռնաթաթերի, որովայնի, աջ գտային, զույգ ծնկան հողերի շրջանների քերծվածքների ձևով, հասցվել են բուք, կոշտ առարկայով, հնարավոր է նշված ժամկետում, որոնք առողջության թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում:

Ձեռք բերված տվյալներով պարզվելով, որ առերևույթ առկա են մի խումբ անձանց կողմից բռնություն գործադրելով զուգորդված խուլիգանություն կատարելու ենթադրյալ հանցագործության հատկանիշներ՝ 2018 թվականի հունվարի 31-ին ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 2-րդ մասով հարուցվել է թիվ 13161618 քրեական գործը և ընդունվել վարույթ:

Նկատի ունենալով, որ քրեական գործի նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել որպես տուժող հարցաքննել Էսան Ալիոեզայի Զահեդին, որի կապակցությամբ անհրաժեշտություն է առաջացել Իրանի Իսլամական Հանրապետություն քննչական պահանջ ուղարկելու նաքատակով հայերենից պարսկերեն թարգմանել քննչական պահանջ ուղարկելու վերաբերյալ փաստաթղթերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ 13161618 քրեական գործով թարգման ճանաչել «ՎԻ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության թարգմանիչ Հրանուշ Թախմասյանին / անձնագիր՝ AN078098/, ով տիրապետում է հայերեն և պարսկերեն գրավոր և բանավոր լեզուներին:

Թարգմանչին բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, ինչես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-339-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

Քննիչ՝



Գ. Հովհաննիսյան

Որոշմանը ծանոթացա, պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իմ իրավունքներն ու պարտականությունները, նախազգուշացվել եմ ականհայտ սուտ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգմանիչ՝



Հ. Թախմասյանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

«21» հունիսի 2018թ.

ք.Երևան

«Վ» քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ՝ Գ.Վ.Հովհաննիսյանս, վերանայելով վարույթիս թիվ 12133292 քրեական գործի նյութերը՝

ՊԱՐԶԵՑԻ

1992 թվականի օգոստոսի 7-ին Էրեբունու շրջանի ՆԳ բաժնի քննչական բաժանմունքի կողմից «Վ» քրեական օրենսգրքի 88-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով հարուցված թիվ 12133292 քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ 1992 թվականի հուլիսի 26-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, անհայտ անձն իջնելով 82-45 ԱԴԲ հաշվառման համարանիշի տաքսի ծառայության ավտոմեքենայից, գնքի սպառնալիքի ներքո Երևան քաղաքի Միչուրին փողոցի 18 տան դիմաց գործող սեղանիկի վրայից Հարություն Բագրատի Նահապետյանից հափշտակել է 850ռուբլուն համարժեք ապրանք և նույն մեքենայով դիմել է փախուստի, որից հետո նույն անձը 1992 թվականի օգոստոսի 1-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, այս անգամ արդեն Ձ 30-00 ԱԲ հաշվառման համարանիշի ավտոմեքենայով, կրկին հրազեն կիրառելու սպառնալիքով, վերոնշյալ վայրից և նմանատիպ հանգամանքներում փորձել է ապրանքներ հափշտակել, սակայն հասկանալով, որ ճանաչվել է Հ.Նահապետյանի կողմից, հայիոյանքներ և սպառնալիքներ է տվել վերջինիս, որից հետո նստելով ավտոմեքենան հեռացել է:

30.09.1992 թվականին վերոնշյալ հանցագործությունը կատարելու համար Ռաֆիկ Կլիմի Ալեքսանյանի բացակայության պայմաններում որոշում է կայացվել «Վ» քրեական օրենսգրքի 88-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով վերջինիս որպես մեղադրյալ ներգրավելու մասին, որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը և հայտարարվել է հետախուզում:

Քրեական գործի քննության ընթացքում պարզվել է, որ Ռաֆիկ Կլիմի Ալեքսանյանը դեռևս 25.09.2000 թվականին մահացել է և հիշյալ հանգամանքը պարզելու նպատակով հարցում է կատարվել համապատասխան իրավասու մարմիններին: Ստացվել է պատասխան օտարալեզու գրություն Ուկրաինայի Արդարադատության նախարարության հարկովի մարզի տարածքային գլխավոր վարչությունից:


Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտ է թարգմանել օտարալեզու գրությունը և «Վի Գրուպ» ՍՊ ընկերության կողմից լիազորված թարգմանիչ Լուսինե Մարգարյանն ազատորեն տիրապետում է ուկրաիներեն գրավոր և բանավոր լեզուներին, ունի բարձրագույն կրթություն, շահագրգռված չէ քրեական գործով, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վ» քր. դատ. օր.-ի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 12133292 քրեական գործով «Վի Գրուպ» ՍՊ ընկերության կողմից լիազորված Լուսինե Մարգարյանին հրավիրել որպես թարգմանիչ մասնակցելու գործի

քննությանը և նրան ծանոթացնել ՀՀ քր. դատ. օր.-ի 83 հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքների և պարտականությունների հետ:

Քննիչ



Գ.Վ. Հովհաննիսյան

Խաչատրյան Գ.Վ. Կարգապահ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«Վի Գրուպ» ՍՊԸ-ի թարգմանիչ Ալինա Խաչատրյանին որպես թարգմանիչ
հրավիրելու մասին

16.05.2018թ.

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի
Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի հատկապես կարևոր
գործերով քննիչ՝ Է.Ս.Կարապետյանս, քննարկելով վարույթիս թիվ 58217516 քրեական
գործերի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

Հակոբ Հայկազի Բաբայանը, հանդիսանալով փաստաբանական գործունեություն
ծավալող «ՀԿԳ» և «ՀԿԳ-իրավաբաններ» ՍՊ ընկերությունների փաստացի
ղեկավարը, ՀՀ դատական ատյաններում «Հ.Լուվի» ՍՊ ընկերության տնօրեն Հասմիկ
Թելմանի Հովհաննիսյանին պատշաճ իրավաբանական ծագություն ցույց տալու և ի
նպաստ նրա երաշխավորված դատական ակտի կայացումն ապահովելու պատրվակով,
սակայն դատական գործընթացի վրա իրավաբանական գործառույթներից դուրս որևէ
ազդեցություն իրականում չունենալով, խարդախությամբ՝ վստահությունը չարաշահելու
եղանակով, 2013-2014թթ. ընթացքում պահանջել և անձամբ մաս-մաս ստանալով
հափշտակել է առանձնապես խոշոր չափի՝ 20.195.000 ՀՀ դրամին համարժեք՝ 50.000
ԱՄՆ դոլար գումար:

Դեպքի առթիվ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության
ծառայության քննչական վարչությունում 09.04.2015թ. ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ
հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 58204315 քրեական գործը և
կատարվել նախաքննություն:

Քննության ընթացքում տուժող է ճանաչվել Հասմիկ Թելմանի Հովհաննիսյանը, ով
ցուցմունքներ է տվել և միաժամանակ դիմումներ ներկայացրել այն մասին, որ
հանդիսանում է «Հ.Լուվի» ՍՊ ընկերության հիմնադիր-տնօրենը: 2006 թվականին
ընկերությունը Երևանի քաղաքապետարանից ձեռք է բերել ընդհանուր 5000 քմ
հողատարածք՝ Երևան քաղաքի Թբիլիսյան խճուղի 29/23 հասցեում: Այդ ժամանակ
«Հ.Լուվի» ՍՊ ընկերության 50 տոկոսի բաժնետերը հանդիսացել է իր եղբոր՝ Սամվել
Հովհաննիսյանի դուստրը՝ Լուսինե Հովհաննիսյանը, իսկ հաշվապահը՝ իր հայրը՝
Թելման Հովհաննիսյանը: 2008 թվականի հունվար ամսին անձնական գործերով
տնական ժամանակով պետք է մեկնել Իտալիա, և որպեսզի իր բացակայության
ժամանակ ընկերության կառավարման գործընթացում խնդիրներ չառաջանային, ինքը
երկու դատարկ թղթերի վրա դրել է ընկերության կնիքը և իր ստորագրությունը, որոնք
հանձնել է հորը: 2010 թվականին, երբ վերադարձել է ՀՀ և ցանկացել է այդ
հողատարածքը գրանցել ու ստանալ սեփականության իրավունք, տեղեկացել է, որ գույքն
արդեն սեփականության իրավունքով գրանցված է եղել իրենց ընտանիքի ծանոթ Սուրեն
Սարգսյանի անվամբ: Հետաքրքրվել և տեղեկացել է, որ իր բացակայության ընթացքում
իր կողմից թողնված դատարկ թղթերը լրացվել են որպես լիազորագիր և ընկերության
ժողովի արձանագրություն, որոնց հիման վրա էլ ընկերությունը, որպես նվիրատվություն,
գույքը հանձնել է իր եղբորը՝ Սամվել Հովհաննիսյանին, իսկ եղբայրն էլ այն վաճառել է
Սուրեն Սարգսյանին: Ինքը Սամվել Հովհաննիսյանի, Սուրեն Սարգսյանի, «Կենտրոն»
նոտարական տարածքի նոտար Նարինե Մանուկյանի, ՀՀ կառավարությանն առընթեր
անշաժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևանի տարածքային

հետևանքներ կիրառելու պահանջների մասին հայցադիմում է ներկայացրել դատարան, որի կապակցությամբ քննվող թիվ ԵԱԲԴ/0887/02/11 քաղաքացիական գործի շրջանակներում ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում և վերաքննիչ քաղաքացիական դատարանում կրել է պարտություն: Դրանից հետո նպատակադրվել է իրավաբանական այլ ընկերությունների միջոցով դատական գործընթացը շարունակել և դրական ադյունքների հասնել: Այդ նպատակով ծանոթի՝ Միսակ Մարտիրոսյանի միջոցով 2012 թվականի հուլիս ամսին դիմել է «ՀԿԳ» ՍՊ ընկերության փաստացի ղեկավար Հակոբ Հայկազի Բաբայանին, ով որևէ դրական արդյունք չի ապահովել իր համար:

Հակոբ Բաբայանն իրեն հայտնել է, թե իբր նախորդ հայցադիմումի մեջ առկա են բացթողումներ և նպատակահարմար է հրաժարվել ԵԱԲԴ/0887/02/11 քաղաքացիական գործով 25.06.2012թ. կայացված ոռշման դեմ ներկայացված վճռաբեկ բողոքից ու այլ հիմքով նոր հայցադիմում ներկայացնել ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, այսինքն՝ ներքաշվել դատական նոր գործընթացի մեջ, որն ավարտվելու է երաշխավորված հաջողությամբ:

Վստահելով փաստաբանական կողմի նախընտրած մարտավարության արդունավետությանը՝ փոխադարձ համաձայնության հիման վրա «ՀԿԳ» ՍՊ ընկերության հետ 23.07.2012թ. կնքել է իրավաբանական ծառայությունների մատուցման թիվ 22 պայմանագիրը, համաձայն որի՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանից պահանջվել է՝ Սամվել Հովհաննիսյանի, Սուրեն Սարգսյանի, «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Մ.Մանուկյանի, ՀՀ կառավարությանն առընթեր անշաժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Երևանի տարածքային ստորաբաժանման, երրորդ անձ՝ Թելման Հովհաննիսյանի՝ շահագրգռված անձանց միջև կնքված գաղթարքն անվավեր ճանաչել և անվավեր գործարքի հետևանքներ կիրառել:

Դրանից հետո՝ 22.08.2012թ., Հ.Բաբայանն առանց իր իմացության, փաստաբաններ Մերի Գևորգյանի և Նարինե Ճաղարյանի դիմումի հիման վրա հետ է վերցվել ԵԱԲԴ/0887/02/11 քաղաքացիական գործով վճռաբեկ բողոքը: Իր հերթին, «ՀԿԳ» ՍՊ ընկերության տնօրեն Ժաննա Գաբրիելյանը 05.09.2012թ. կազմել է մատուցված ծառայությունների հանձնման-ընդունման կեղծ ակտ, ըստ որի՝ ընկերությունը մատուցել է իրավաբանական ծառայություններից վճռաբեկ բողոքի կազմում և ներկայացուցչություն ՀՀ վճռաբեկ դատարանում և ներկայացվել է դրանց փաստաբանների պալատին՝ հիշյալ գրասենյակի փաստաբաններ Մերի Գևորգյանի և Նարինե Ճաղարյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու ժամանակ: Նույնարժանիակ ակտ կազմվել է 12.08.2013թ., այն մասին, որ ընկերությունն իրականացրել է դատական ներկայացուցչություն առաջին ատյանի դատարանում և վերաքննիչ քաղաքացիական դատարանում: Հիշյալ ակտերը քննության ժամանակ ներկայացվել է նաև վարույթ իրականացնող մարմնին:

Վերոգրյալի հիման վրա դեպքի ադթիվ թիվ 58204315 քրեական գործի նյութերով 2016 թվականի դեկտեմբերի 07-ին ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 58217516 քրեական գործը, այն առանձնացվել է առանձին վարույթում և քրեական գործի հետագա նախաքննությունը շարունակելու համար ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին, որտեղ ընդունվել է վարույթ:

Ժաննա Գաբրիելյանին հարցաքննելու, վերջինից ստորագրության և ձեռագրի

Նկատի ունենալով, որ օգնություն ցույց տալու մասին վերոհիշյալ հարցումը անհրաժեշտ է հայերեն լեզվից թարգմանել ֆրանսերեն, ուստի անհրաժեշտ է քրեական գործով հրավիրել թարգմանիչ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

Թիվ 58217516 քրեական գործով հրավիրել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության աշխատակից, թարգմանիչ՝ Ալինա Խաչատրյանին, ով տիրապետում է հայերեն, ֆրանսերեն լեզուներին:

Թարգմանչին բացատրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-339-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվության մասին:

Հատկապես կարևոր գործերով քննիչ



Է.Ս.Կարապետյան



28

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Քրեական գործով քարգմանիչ ներգրավելու մասին

29 մարտի 2017թ.

ք.Երևան

ՀՀ թնչական կոմիտեի Երևան քաղաքի թնչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ քաղաքական շրջանների թնչական բաժնի թնչիչ, արդարադատության կապիտան Վ.Մ.Բավեյան, քարգմանիչով վարույթումս քննվող թիվ 13178717 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Չ Ե Ց Ի

13.03.2017 թ. քստ. Կենտրոնականի բաժնում հաղորդում է տվել Սեյեդիուման Հեսամյանը այն պահին, որ 20.02.2017թ. իր ծանոթ՝ Արտակ Հենրիկի Սիմոնյանը Տոլստոյ փողոցի 49 հասցեում գործող «Սեյեդի-Հոթել» հյուրանոցի, իր վարձակալած թիվ 9 սենյակում գտնվելու ընթացքում սեղանի վրայից քարգմանիչի հափշտակել է 100 ԱՄՆ դոլլար գումար և ԻԻՀ «Մելլաք» բանկի բանկային քարտ: Գեպի առթիվ ՀՀ ոստիկանության Կենտրոնականի բաժնում 2017 թվականի մարտի 16-ին քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 13178717 քրեական գործը և քարգմանիչով վարույթում կատարելու համար ուղարկվել ՀՀ թնչական կոմիտեի Կենտրոն և Նորք-Մարաշ քաղաքական շրջանների թնչական բաժին:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական գործով տուժող Սեյեդիուման Հեսամյանը տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է պարսկերեն բանավոր ու գրավոր լեզվին, մինչդեռ Վ.Մ.Բավեյանի Հանրապետությունում դատավարությունն իրականացվում է հայերեն լեզվով, քարգմանիչով վարույթում է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել «ՎԻ Գրուպ» ՍՊԸ-ի քարգմանիչ Հրանուշ Սկրտչի Թախմասյանին կատարվելիք թնչական գործողություններին առնակցելու համար:

Սեյեդիուման Հեսամյանի մասնակցությամբ կատարված գործողություններին քարգմանիչով վարույթում Կենտրոնական բաժնում մասնակցել է մասնավոր քարգմանիչ Քնարիկ Գապոյանը: Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 15-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ 13178717 քրեական գործով որպես քարգմանիչ ներգրավել «ՎԻ Գրուպ» ՍՊԸ-ի քարգմանիչ Հրանուշ Սկրտչի Թախմասյանին / A N0780981/: քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված քարգմանիչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված գաղտնիսահմանափակության մասին:

ՔՆՆԻՉ՝

Վ.Մ.Բավեյան

Ծանոթացա քարգմանիչի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել են ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված գաղտնիսահմանափակության մասին:

Հ. Թախմասյանին

29 03 2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

10 մայիսի 2018թ.

ք. Երևան

«Քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ՝ Հ. Հ. Չալարյան, վերանայելով թիվ 69103614 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչությունում ըստ մեղադրանքի Նորայր Սերյոժայի Առաքելյանի քննվող սույն քրեական գործով անհրաժեշտություն է առաջացել հայերենից ֆրանսերեն թարգմանել վերջինիս վերաբերյալ նախաքննության ընթացքում կազմված փաստաթղթերը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 83-րդ հոդ. պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի


1. Սույն քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանչուհի Ալինա Խաչատրյանին, ում պարզաբանվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Մարդկանց թրաֆիքինգի և թմրամիջոցների
ապօրինի շրջանառության հանցագործությունների
քննության վարչության պետի տեղակալ՝



Հ. Հ. Չալարյան

Որոշման հետ ծանոթացա, իմ իրավունքները
և պարտականությունները ինձ պարզաբանված են
թարգմանիչ՝



Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Թարգմանիչ ներգրավելու մասին

« » 05. 2018թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ա. Կարապետյանցս, քննարկելով թիվ 09158317 քրեական գործի նյութերը

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2017թ. մարտի 6-ին Վանուհի Անդրանիկի Գասպարյանը հաղորդում է տվել, որ 27.09.2016թ. <<Լիա-Կ գրուպ>> ՍՊԸ-ի և ՌԴ Ալեքսեևկա քաղաքի Ֆոունդեի 4 հասցեում գտնվող <<ԿՌՑ ԷՖԿՕ-Կասկադ>> ՍՊԸ-ի միջև կնքվել է պայմանագիր, որով <<Լիա-Կ>> գրուպ ՍՊԸ-ն ձեռք է բերել 18.154.56 ԱՄՆ դոլարին համարժեք 8.594.500 << դրամի արևածաղկի ձեթ: 30.09.2016թ. բեռնափոխադրում իրականացնող ՌԴ <<Սավատրանս>> ՍՊԸ-ի վարորդ Յուրի Դումիտրասքոն <<DAF/wielton>> մակնիշի IS 930 AEX/is08 DDP հաշվառման համարանիշի ավտոմեքենայով բեռնված արևածաղկի ձեթը << Երևան քաղաքի Արին Բերդի փողոցի 14 հասցե տեղափոխելու համար դուրս է եկել <<ԿՌՑ ԷՖԿՕ-Կասկադ>> ՍՊԸ-ի տարածքից, սակայն իրեն վստահված գույքը Հայաստան չի տեղափոխել, յուրացրել է այն՝ <<Լիա-Կ գրուպ>> ՍՊԸ-ին պատճառելով 18.154.56 ԱՄՆ դոլարին համարժեք 8.594.500 << դրամի գույքային վնաս:

Դեպքի առթիվ 16.03.2017թ. ոստիկանության ԵՔՎ Քանաքեռ-Զեյթունի բաժնում << քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով հարուցվել է թիվ 09158317 քրեական գործը, որը ենթակայության կարգով ստացվել է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի և կատարվել է նախաքննություն:

Նախքան նույնության ընթացքում պարզվել է, որ Հայաստանի Հանրապետությունում գործող <<Լիա-Կ Գրուպ>> ՍՊԸ-ի և Ռուսաստանի Դաշնությունում գործող <<ԿՌՑ ԷՖԿՕ-Կասկադ>> ՍՊԸ-ի միջև 22.05.2015թ. կնքվել է թիվ ԵՃ-ՇԻԴ-615 համագործակցության պայմանագիրը: 02.09.2016թ. <<Լիա-Կ Գրուպ>> ՍՊԸ-ն և <<ԿՌՑ ԷՖԿՕ-Կասկադ>> ՍՊԸ-ն կազմել են վերը նշված պայմանագրին կից թիվ 92 հավելվածը, որով <<ԿՌՑ ԷՖԿՕ-Կասկադ>> ՍՊԸ-ն <<Լիա-Կ Գրուպ>> ՍՊԸ-ին վաճառել է 18.154.56 ԱՄՆ դոլարին համարժեք 8.594.500 << դրամի արևածաղկի ձեթ: Քանի որ, <<Լիա-Կ Գրուպ>> ՍՊ ընկերությունը իր կողմից ձեռք բերված ապրանքները Հայաստանի Հանրապետություն տեղափոխում է բեռնափոխադրում իրականացնող ընկերությունների միջոցով՝ մասնավորապես <<Լիա-Կ>> ՍՊ ընկերության միջոցով, որը 27.09.2016թ. դիմել է «ԷՌ ԷՍ ԼՈԳԻՍՏԻԿԱ» ՍՊ ընկերությանը՝ նշված արևածաղկի ձեթը << տեղափոխելու համար և նույն օրը կնքվել է համապատասխան պայմանագիր: «ԷՌ ԷՍ ԼՈԳԻՍՏԻԿԱ» ՍՊ ընկերությունը հանդիսանալով միջնորդ ընկերություն և չունենալով բեռնատար ավտոմեքենաներ իր հերթին 27.09.2016թ. կնքել է պայմանագիր ՌԱ «ԴԻԱԴԱ ՏՐԱՆՍ» ՍՊ ընկերության հետ՝ տվյալ բեռը << տեղափոխելու համար: ՌԱ «ԴԻԱԴԱ ՏՐԱՆՍ» ՍՊ ընկերությունը նույնպես հանդիսացել է միջնորդ կազմակերպություն և իր հերթին 27.09.2016թ. կնքել է պայմանագիր Լատվիայի Հանրապետությունում գործող «SAVATRANS-RO» SRL ընկերության հետ՝ նշված բեռը << տեղափոխելու համար:

2017թ. մարտի 6-ին «ԷՌ ԷՍ ԼՈԳԻՍՏԻԿԱ» ՍՊ ընկերության հիմնադիր Վանուհի Անդրանիկի Գասպարյանը հաղորդում է տվել, որ <<Լիա-Կ Գրուպ>> ՍՊԸ-ի կողմից ձեռք բերված արևածաղկի ձեթը 30.09.2016թ. <<ԿՌՑ ԷՖԿՕ-Կասկադ>> ՍՊԸ-ի պահեստից, որը գտնվում է՝ ՌԴ, Բելգորոդի մարզ, ք.Ալեքսեևկա, Ֆոունդեի 4 հասցեում, դուրս է եկել և Հայաստանի Հանրապետություն չի տեղափոխվել:

ԻԻԱ «ԴԻԱԴԱ ՏԻՎԱՆԱ» ՍՊ ընկերության տնօրեն Էլլա Բարխուդարյանի որպես վկա հարցաքննությամբ պարզվել է, որ իրենց ընկերության և «SAVATRANS-RO» SRL ընկերության միջև էլեկտրոնային եղանակով կնքված պայմանագրի համաձայն՝ նշված բեռը ՀՀ տեղափոխելու նպատակով «SAVATRANS-RO» SRL ընկերությունը «DAF/wielton» մակնիշի «IS 93 AEX/IS 08 DDP» հաշվառման համարանիշի ավտոմեքենան ուղարկել է «ԿՌՑ ԷՖԿՕ-Կասկադ» ՍՊԸ-ին պատկանող վերը նշված հասցեում գտնվող պահեստ, որտեղ 30.09.2016թ. 21,5 տոննա արևածաղկի ձեթը բարձվել է նշված ավտոմեքենան, այն վարել է Մոլդովայի Հանրապետության քաղաքացի Յուրի Դումիտրասկոն, սակայն Հայաստանի Հանրապետություն չի տեղափոխել:


Պարզվել է նաև, որ ՌԱ «ԴԻԱԴԱ ՏԻՎԱՆԱ» ՍՊ ընկերության և «SAVATRANS-RO» SRL ընկերության միջև էլեկտրոնային եղանակով կազմված բեռնափոխադրման հայտում բեռնատար ավտոմեքենայի մակնիշ և հաշվառման համարանիշ նշված է հետևյալը՝ «DAF xp 105/xp 105 410 T wielton PC 16/PC 16 pt», իսկ 30.03.2016թ. կազմված տարանցիկ փոխադրման ամփափագրում նշված է «DAF/wielton» մակնիշի «IS 93 AEX/IS 08 DDP» հաշվառման համարանիշի ավտոմեքենա:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել թարգմանելու Մոլդովայի հանրապետությունից ստացված իրավական հարցման պատասխան գրությունները, որոնք գրված են մոլդովերեն, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական ատավարության օրենսգրքի 55-րդ և 3-րդ հոդվածներով:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Վարույթիս թիվ 09158317 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ» ՍՊԸ-ի, թարգմանիչ Օբրիջանու Քրիստիանին, ում պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Քանաքեռ-Ձեյթուն վարչական շրջանի
քննչական բաժնի ավագ քննիչ՝


Ա.Կարապետյանց

Որոշման հետ ծանոթացա, իմ իրավունքները
և պարտականությունները ինձ պարզաբանված են
թարգմանիչ՝

_____ 2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

քրեական գործին թարգմանիչ ներգրավելու մասին

“10” ապրիլի 2017թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության մայրո Դ.Իգիթյանս,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության ՀԿԳ քննության վարչությունում քննվել է թիվ 19204297 քրեական գործը՝ հարուցված ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 99-րդ հոդվածի 6-րդ կետի և 232-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով՝ 14.02.1997թ. ՀՀ ՊՆ 63653 զորամասի 3-րդ գումարտակի 3-րդ վաշտի հրամանատար, լեյտենանտ Կարեն Ղարիբի Նազարյանի կողմից նույն օրը՝ ժամը 15⁰⁰-ի սահմաններում Վանաձոր քաղաքի Երևանյան խճուղում իր մոտ ապօրինի պահվող ինքնաձիգից շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով կրակահերթ արձակելու միջոցով Վանաձոր քաղաքի բնակիչ Վահան Մելիսի Զուլալյանին սպանելու փաստով:

Քրեական գործի նախաքննության ընթացքում Վանաձոր քաղաքի բնակիչ Կարեն Ղարիբի Նազարյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, 325-րդ հոդվածի 1-ին մասով և 329-րդ հոդվածի 1-ին մասով, 325-րդ հոդվածի 1-ին մասով և 329-րդ հոդվածի 1-ին մասով և մեղադրյալին դատի տալու միջնորդությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 272-րդ հոդվածի կարգով քրեական գործն ուղարկվել է ՀՀ ԶԿ դատախազություն:

Վրաստանի իրավասու մարմնից ստացվել են վրացերեն փաստաթղթեր, որով իսկ անհրաժեշտություն է առաջացել դրանք թարգմանել հայերեն և այդ նպատակով հիշյալ փաստաթղթերն ուղարկվել են ՀՀ ԶԿ դեպարտամենտի արտաքին կապերի բաժին:

ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի արտաքին կապերի բաժնից ստացվել է 10.04.2018թ. N 27/11-30-18 գրությունն այն մասին, որ թարգմանությունն անպահովելու համար անհրաժեշտ է կայացնել թարգմանիչ ներգրավելու մասին որոշում և թարգմանությունն իրականացնելու է “Վի գրուպ” ՍՊԸ-ի թարգմանիչ Նելլի Թոռչյանը:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտություն է առաջացել Վրաստանի իրավասու մարմնից ստացված փաստաթղթերը թարգմանել հայերեն լեզվով, ուստի վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 19204297 քրեական գործով “Վի Գրուպ” ՍՊԸ-ի թարգմանիչ Նելլի Թոռչյանին ներգրավվել թարգմանիչ՝ վրացերեն բանավոր և գրավոր խոսքի թարգմանություն իրականացնելու որակավորմամբ:

2. Դիմել ՀՀ ԶԿ դեպարտամենտին՝ վերոնշյալ փաստաթղթի վրացերեն լեզվով թարմանությունն ապահովելու համար:

3. Պարզաբանել թարգմանչին նրա պարտականությունները և իրավունքները, նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին, որի մասին նրան հայտնել ստորագրությամբ:

ՀԿԳ քննիչ,
արդարադատության մայրո

Դ.Իգիթյան

Ես՝ ներքոստորագրյալս, 2018թ. հրավիրված լինելով վերոնշյալ քրեական գործով որպես թարգմանիչ վրացերեն լեզվով թարգմանություն կատարելու համար, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանիչի իմ պարտականություններն ու իրավունքները:

Թարգմանիչ՝



Ն.Թոռյան

Որոշումը հայտնեց, թարգմանիչի իրավունքներն ու պարտականությունները պարզաբանեց, պատասխանատվության մասին նախազգուշացրեց.

**ՀԿԳ քննիչ,
արդարադատության մայր**



Դ.Գիգյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

թարգմանիչ ներգրավելու մասին

ք. Երևան

17 հուլիսի 2018թ.

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Ա.Միքայելյանս, վերանայելով թիվ 57112715 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2015 թվականի մայիսի 30-ին՝ ժամը 16-ի սահմաններում, Արմավիրի մարզի Փարաքար գյուղի Ռոբերտ Գասպարյան 26 տան դիմացով անցնող Երևանյան փողոցի երթևեկելի գոտում Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Արթուր Միքայելի Ֆարամազյանը, մեկ ուրիշին մարմնական վնասվածք պատճառելու դիտավորությամբ, բռնցքով հարվածել է ճանապարհի երթևեկելի մասից իրեն դուրս հրավիրող, Արմավիրի մարզի Փարաքար գյուղի բնակիչ Հայրապետ Հարությունի Մաչեյանի դեմքի շրջանին, ինչի հետևանքով վերջինիս առողջությանը պատճառել է ծանր մարմնական վնասվածք՝ կյանքին վտանգ սպառնացող:

Դեպքի առթիվ 2015 թվականի հունիսի 9-ին ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 57112715 քրեական գործը, կատարվում է նախաքննություն:

Նկատի ունենալով, որ քրեական գործի նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել քրեական գործում առկա որոշակի փաստաթղթեր թարգմանել հայերենից վրացերեն, իսկ ՀՀ-ում քրեական դատավարությունը կատարվում է հայերեն լեզվով, ուստի անհրաժեշտ է սույն քրեական գործի նախաքննության ընթացքում ներգրավել վրացերեն լեզվի թարգմանիչ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 57112715 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել "Վի Գրուպ" ՍՊ ընկերության վրացերենից հայերեն, հայերենից վրացերեն լեզվի թարգմանիչ Ելենա